ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IE76-518A-415C-AFA9 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ,

ԱՊԱՑՈՒՅՑ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ

ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/0713/02/26 ք. Երևան
19 Մարտի 2026թ

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Տ. Գրիգորյանս (այսուհետ նաև՝ Դատարան), ուսումնասիրելով <<ԿԱՄԿԱԴ-ՄԻՐՏԵԿ>> ՓԲԸ-ի հայցադիմումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Հայցվոր <<ԿԱՄԿԱԴ-ՄԻՐՏԵԿ>> ՓԲԸ-ի ներկայացուցիչ Կ.Մարգարյանը հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ <<Հայաստանի Էլեկտրական Ցանցեր>> ՓԲԸ-ի՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ գնումների հանձնաժողովի 14.01.2026թ. թիվ 50/2 արձանագրությունը՝ «Երէներգո» ՓԲԸ-ի ներկայացրած առաջարկները մրցութային փաստաթղթերով սահմանված անհրաժեշտ տեխնիկական

չափանիշներին համապատասխանող ճանաչելու, «Երէներգո» ՓԲԸ-ին հաղթող ճանաչելու և վերջինիս հետ պայմանագիր կնքելու որոշում կայացնելու մասերով անվավեր ճանաչելու և որպես հետևանք՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին «ԿԱՄԿԱԴ-ՄԻՐՏԵԿ» ՓԲԸ-ին հաղթող ճանաչելու և վերջինիս հետ 100Ա եռաֆազ քառալար էլեկտրոնային բազմասակագնային դարձափոխիչային ուղիղ միացման հաշվիչների մատակարարման պայմանագիր կնքելուն պարտավորեցնելու պահանջների մասին:

Դատարանի 29.01.2026թ. և 04.02.2026թ. որոշումներով հայցադիմումները վերադարձվել են: Միաժամանակ, 04.02.2026թ. հայցադիմումը վերադարձնելու որոշման դեմ ներկայացված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 17.03.2026թ. որոշում է կայացրել Դատարանի 04.02.2026թ. <<Հայցադիմումը վերադարձնելու մասին>> որոշումը վերացնելու մասին:

Քաղաքացիական գործն էլեկտրոնային համակարգում մակագրվել է 18.03.2026թ. ժամը 21:30-ին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ և 5-րդ մասերի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն անհապաղ ուղարկվում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին: Լիազորված մարմինը սույն մասով նախատեսված որոշումն

անհապաղ հրապարակում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված տեղեկագրում՝ նշելով կասեցման օրը:

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն՝ սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները. լիազորված մարմին՝ պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող՝ Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության պետական մարմին:

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել: *Սույն մասը կարող է կիրառվել, եթե՝*

1) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը.

2) ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

Վերոգրյալի հիման վրա՝ ինչպես նաև նկատի ունենալով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի կիրառման վերաբերյալ սույն գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.03.2026թ. որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, Դատարանը գտնում է, որ հայցադիմումը ենթակա է վարույթ ընդունման:

Դատարանը կարևորում է նաև այն, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ եթե հայցապահանջն իր բնույթով այնպիսին է, որ հայցադիմում ներկայացնելու պահին անհնար է որոշել հայցագնի չափը, ապա հայցվորը պարտավոր է վճարել օրենքով ոչ դրամական պահանջներով հայցադիմումների ներկայացման համար սահմանված պետական տուրքի չափը: Այս դեպքում դատարանը դատական ակտով անդրադառնում է գործի քննության ընթացքում որոշված հայցագնին համապատասխան լրացուցիչ պետական տուրք գանձելու հարցին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը

քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ՝

1) դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործին մասնակցող անձանցից ստանալ պարզաբանումներ գործի լուծման համար նշանակություն ունեցող վկայակոչված հանգամանքների և գործում առկա ապացույցների վերաբերյալ.

2) ներկայացվել է հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդություն.

3) հայցվորը հրաժարվել է պահանջից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գործը դատական նիստում քննելու հարցը կարող է լուծվել նաև հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշմամբ:

Արդյունքում, Դատարանը հայցադիմումի և դրան կից ներկայացված ապացույցների ուսումնասիրության արդյունքում եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործին մասնակցող անձանցից ստանալ պարզաբանումներ գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ, հետևաբար անհրաժեշտ է հրավիրել դատական նիստ:

Բացի այդ, Դատարանն արձանագրում է, որ գործի քննության ընթացքում կարող է առաջանալ լրացուցիչ պետական տուրք գանձելու հնարավորություն՝ նկատի ունենալով այն, որ թիվ «Ա-759-25/3497» ծածկագրով գնման գործընթացի հրավերում առկա չէ տեղեկատվություն այն մասին, որ գնման գործընթացն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, հետևաբար այս կապակցությամբ ևս անհրաժեշտ է գործին մասնակցող անձանցից ստանալ պարզաբանումներ:

Միևնույն ժամանակ, Դատարանը գտնում է, որ պատասխանող <<Հայաստանի Էլեկտրական Ցանցեր>> ՓԲԸ-ից անհրաժեշտ է պահանջել թիվ «Ա-759-25/3497» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Վերոգրյալների հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 188-րդ, 199-րդ, 200-րդ, 234.5-րդ և 234.6-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայցադիմումն ընդունել վարույթ և այն քննել դատական նիստում:

Պատասանող <<Հայաստանի Էլեկտրական Ցանցեր>> ՓԲԸ-ից պահանջել թիվ «A-759-25/3497» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Որոշումը՝ ապացույցներ պահանջելու մասով, ենթակա է կատարման պատասխանողի կողմից այն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Հրավիրել դատական նիստ՝ 06.04.2026թ., ժամը 14:00-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի Աջափնյակ-2 նստավայրի վարչական շենքում (հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հալաբյան 41ա, 11-րդ հարկ, դատական նիստերի դահլիճ թիվ 10):

Որոշումն անհապաղ ուղարկել լիազորված մարմին ՀՀ ֆինանսների նախարարությանը:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Digitally signed by GRIGORYAN TIGRAN 4008820477
Date: 2026.03.19 14:55:41 AMT

ԴԱՏԱՎՈՐ՝

Տ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am